ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԵՎ ՈՉ ՀԻՄՆԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿՆՔՄԱՆ ՄԱՍԻՆ
LMC-MAA-ddmmyy-XXX

_____թ.

«ԼԵՆԴՄԱՐԿ ԿԱՊԻՏԱԼ» փակ բաժնետիրական ընկերությունը (ներդրումային ծառայությունների մատուցման լիցենզիա N 16, ՀՎՀՀ՝ 02695279, հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Վ. Սարգսյան 10, տարածք 118) (այսուհետ՝«Ընկերություն»), ի դեմս գործադիր տնօրեն(_____), ով գործում է կանոնադրության հիման վրա, և _____
(գրանցման/անձը հաստատող փաստաթղթի համար՝ _____, ՀՎՀՀ/ՀԾՀ՝ _____, հասցե՝ _____) (այսուհետ՝«Հաճախորդ»), մյուս կողմից, միասին անվանվելով «Կողմեր», իսկ առանձին՝ «Կողմ», ղեկավարվելով համաձայնեցին հետևյալի մասին.

1. Համաձայնության առարկան

1.1. Կողմերը ՀՀ քաղաքացիական օրենսգրքով, «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքով և այլ իրավական ակտերով, Ընկերության Ներդրումային և ոչ հիմնական ծառայությունների մատուցման կանոններով (այսուհետ՝ «Կանոններ») սահմանված կարգով կնքում են ներդրումային և ոչ հիմնական ծառայությունների (այսուհետ՝ «Ծառայություններ») մատուցման պայմանագիր (այսուհետ՝ «Պայմանագիր»):

1.2. Պայմանագիրը կնքվում է Ընկերության Ներդրումային և ոչ հիմնական ծառայությունների մատուցման պայմանագրի (Պայմանների) պայմաններով:

1.3. Ծառայությունների շրջանակը սահմանված է Հաճախորդի կողմից ներկայացված և Ընկերության կողմից բավարարված՝ «ԼԵՆԴՄԱՐԿ ԿԱՊԻՏԱԼ» ՓԲԸ ներդրումային եվ ոչ հիմնական ծառայությունների մատուցման պայմանագրին միանալու դիմումում (այսուհետ՝«Դիմում»)՝ դրա բոլոր փոփոխություններով հանդերձ, որը կցվում է սույն փաստաթղթին որպես անբաժանելի հավելված:

2. Կողմերի իրավունքները, պարտավորությունները և պատասխանատվությունը

2.1. Կողմերի իրավունքները, պարտավորությունները և պատասխանատվությունը սահմանված են Կանոններով և Պայմաններով:

2.2. Ի հավելումն Կանոններով և Պայմաններով սահմանված իրավունքների, պարտավորությունների և պատասխանատվության՝ Կողմերն ունեն նաև ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ իրավունքներ և պարտականություններ, ինչպես նաև կրում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված պատասխանատվություն:

3. Վարձատրությունը

3.1. Ծառայությունների համար վարձատրությունը սահմանվում է Ընկերության Սակագներով, իսկ հաշվարկման և վճարման կարգը՝ Պայմաններով:

4. Անցումային դրույթ

4.1. Սույն փաստաթուղթը կազմված է հայերեն լեզվով՝ 2 (երկու) հավասար իրավաբանական ուժ ունեցող օրինակներից: Կողմերից յուրաքանչյուրին տրվում է մեկական օրինակ:

4.2. Սույն փաստաթղթին կից երկկողմանի ստորագրված հավելվածում ներկայացված են Ընկերության և Հաճախորդի Տեղեկատվության փոխանակման հուսալի միջոցները և իրավասու անձանց տվյալները: Տեղեկատվության փոխանակման հուսալի միջոցները և իրավասու անձանց փոփոխության դեպքում կողմերը ստորագրում են նոր հավելված:

ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ	ՀԱՃԱԽՈՐԴ
«ԼԵՆԴՄԱՐԿ ԿԱՊԻՏԱԼ» ՓԲԸ	
Վ. Սարգսյան 10, 118 տարածք, ք. Երևան, 0010, ՀՀ	
ՀՎՀՀ: 02695279	
Գործադիր տնօրեն	
_____	